Նարինե Նուշերվանյան

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Բանալի բառեր: Գաղթականություն, գաղթ, Սփյուռք, սփյուռքահայ, արևմտահայ, Հայոց ցեղասպանություն, Համիդյան ջարդեր, համաշխարհային պատերազմ, համայնքներ, համայնքային ինքնակազմակերպում, սփյուռքայնացման գործընթաց:

19-րդ դարի վերջին համիդյան ջարդերի (1894-1896 թթ.), ապա 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության իշխանությունների իրականացրած ցեղասպանության հետևանքով, երբ նահատակվեց շուրջ 1.5 մլն. հայ, հարյուր հազարներն էլ տեղահանվեցին իրենց բնօրրանից, հայաշատ համայնքներ ձևավորվեցին կամ վերակազմավորվեցին Սիրիայում, Լիբանանում, Ֆրանսիայում, Բուլղարիայում, ԱՄՆ-ում, Եգիպտոսում, Վրաստանում, Հունաստանում, Արգենտինայում և այլուր: Տեղաշարժեր սկսվեցին դեպի՝ 1. ավանդական հայկական գաղթավայրեր, 2. միանգամայն նոր ձևավորվող գաղթավայրեր: Այս 2-րդ ուղիով են ձևավորվել այնպիսի համայնքներ, ինչպիսիք են Շվեդիայի, Ավստրիայի, Դաշնային Գերմանիայի, Ավստրալիայի հայկական նոր համայնքները:

Հատկանշական է, որ, ի տարբերություն նախորդ դարերում եկող գաղթականության, որոնք հավաքական կյանք գրեթե չեն ունեցել, մի մասը մտել է կաթոլիկ համայնքների մեջ և արագ ենթարկվել ձուլման, նոր եկող գաղթականությունը բնակություն է հաստատում հավաքական ձևով, բաց անում դպրոցներ, ստեղծում հասարակական և բարեգործական կազմակերպություններ, հրապարակում թերթեր և հանդեսներ, որոնք և նպաստում են գաղթավայրի գոյատևմանն ու ամրացմանը:

Առաջին աշխարհամարտի հենց սկզբին առաջին տագնապալի լուրերը հայերի մասին եկան Կովկասից: Թուրքական վայրագությունների հետևանքով Անդրկովկասի հայ բնակչության մի մեծ զանգված՝ մոտ 500.000 մարդ (Բաթումի շրջանից 20.000, Կարսից՝ 120.000, Ախալցխայից՝ 30.000, Ախալքալաքից՝ 80.000, Ալեքսանդրապոլի գավառից՝ 60.000, Էջմիածնի և Սուրմալուի գավառներից՝ 80.000, Երևանի, Շարուրի և Նախիջևանի գավառներից՝ 100.000 հայեր), հեռացավ դեպի Ռուսաստան և Միջին Ասիա[1]:

1915-1917 թթ. թուրքական ջարդերից մազապուրծ եղած արևմտահայերի և պարսկահայերի գաղթի հետևանքով *Հյուսիսային Կովկասի* հայ բնակչության թիվը մոտ 30.000-ով ավելացավ: 18-րդ դարում առաջացած հայկական գաղթավայրերի կողքին ձևավորվեցին նորերը (Արմավիրում, Եկատերինոդարում, Վլադիկավկազում, Կիսլովոդսկում, Պյատիգորսկում, Գեորգիևսկում, Գրոզնիում, Ստավրոպոլում և այլն): Փաստորեն 1918 թ. թուրքական արշավանքի նախօրեին Հյուսիսային Կովկասի հայության թիվը շուրջ 100 հազար էր[2], իսկ արդեն 1918 թ. ընթացքում Հյուսիսային Կովկաս էր եկել 124-127.000 հայ գաղթական, որից 52-55.000-ը՝ արևելահայ, 30.000-ը՝ արևմտահայ, 40.000-ը՝ Բաքվի նահանգի հայեր և 2.000-ը՝ աբխազահայեր[3]:

Առաջին աշխարհամարտն ու Արևմտյան Հայաստանում հայության ցեղասպանությունը, 1917 թ. փետրվարյան ռուսական հեղափոխությունն ու նրան հաջորդած քաղաքացիական պատերազմը Ռուսաստանի հայաշատ գաղթօջախները համալրեցին հայերի նոր զանգվածներով, որոնք, անընդհատ տեղաշարժերի արդյունքում, աստիճանաբար ընդլայնեցին իրենց բնակության աշխարհագրությունը:

1920 թ. օգոստոսի 28-ի համառուսաստանյան ժողովրդագրական մարդահամարի վիճակագրական արդյունքներով, որոնք ստացվել են 44 նահանգներից (ընդամենը 48-

[1] Տե՛ս Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), Ե., 1958, էջ 86:
[2] Տե՛ս Մինասյան Ս., Հայերը Հյուսիսային Կովկասում 1918-1920 թթ., Ե., 2016, էջ 12:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 57: Տե՛ս նաև ՀՀ ԳԱԱ, ֆոնդ 200, գործ 618, թուղթ 139, 140:

ն էին), հայ ազգաբնակչություն առկա էր նահանգներից 41-ում: Մարդահամարի արդյունքում Ռուսաստանում (առանց ինքնավար միավորների) արձանագրվել է 137.119 հայ: Հյուսիսկովկասյան երկրամասի Կուբան-Չերնոմորիեի, Թերեքի, Ստավրոպոլի և Դոնի հայ ազգաբնակչությունը միասին կազմում էր 129.126 մարդ[1]:

Ավելի ընդգրկուն ու համընդհանուր պատկեր է ներկայացնում 1926 թ. մարդահամարը, ըստ որի ՌԽՖՍՀ-ում արձանագրվել է 195.410 հայազգի բնակիչները՝ գլխավորապես կենտրոնացած Դոնի, Չերնոմորիեի, Թերեքի, Կուբանի, Արմավիրի, Մայկոպի և Ստավրոպոլի օկրուգներում[2]:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի թիվը նաև Ուկրաինայում է աճել՝ ի հաշիվ Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայաբնակ վայրերից այստեղ ապաստանած հայ փախստականների: Պատերազմի ավարտից հետո, ըստ 1926 թ. մարդահամարի արդյունքների, Ուկրաինայում հաստատվել էր 10.631 հայ: Ուկրաինական ԽՍՀ հայաշատ քաղաքներն էին Խարկովը՝ 2.994 հայ, Օդեսան՝ 1.843 (1919 թ. դրությամբ միայն Օդեսայում 5.000 գաղթական կար՝ գլխավորապես Կ. Պոլսից և Ռումինիայից եկած)[3] Կիևը՝ 638 հայ բնակիչներով:

Միջին Ասիան այն տարածաշրջաններից է, ուր հայկական տարրը դեռևս դարեր առաջ է ունեցել իր ներկայությունն ու մասնակցությունը տեղի հատկապես տնտեսական կյանքին: Միջին Ասիայի տարբեր շրջաններում գոյություն ունեցող հայկական փոքրաթիվ համայնքները ստվարանում են տարածաշրջանը Ռուսաստանին միացնելուց հետո, մասնավորաբար, 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին: 1926 թ. դրությամբ ամբողջ Միջին Ասիայի հայ ազգաբնակչության թիվը կազմում էր 30.244 մարդ[4]:

Համաշխարհային առաջին պատերազմը և նրան անմիջապես հաջորդող ժամանակաշրջանը ստվարացման նոր շրջան հանդիսացան *Սիրիայի և Լիբանանի հայ գաղթավայրերի համար*: Հալեպն ու նրա շրջանները հայերի քարավանների հիմնական հանգրվաններն էին: 1915 թ. այստեղ եկան զեյթունցիների առաջին քարավանները, իսկ ամռանն ու աշնանը հասան Կիլիկիայի և արևելյան նահանգների հայության բեկորները: 1915-1916 թթ. ավելի քան 350.000 հայ հանգրվանել էր Հալեպում, որտեղից էլ քշվել անապատներ[5]: Նրանցից քչերին է հաջողվել մազապուրծ ազատվել թուրքական իշխանությունների հետապնդումներից ու ջարդերից և գաղտնի ապաստանել Հալեպում, Հոմսի շրջանում, Դամասկոսում և Հավրանի գյուղերում՝ Դամասկոսից դեպի Երուսաղեմ ձգվող երկաթգծի երկայնքով[6]:

1918 թվականին, երբ անգլիական և ֆրանսիական զորաբանակները գրավեցին Սիրիան և Լիբանանը, նրանց կազմում կային 6.000 հայ կամավորներ, որոնք գործուն մասնակցություն ունեցան Արարայի և Դամասկոսի ճակատամարտերում: Թուրքական զորքերի հեռանալուց հետո հայ գաղթականությունը Սիրիայից և Լիբանանից սկսեց անցնել դեպի Կիլիկիա և այնտեղ նորից կառուցել իր օջախն այն ակնկալություններով, որ դաշնակիցները կճանաչեն հայ ժողովրդի օրինական իրավունքները Կիլիկյան Հայաստանի նկատմամբ: Մինչև 1919 թ. վերջ Կիլիկիա էին վերադարձել մոտ 150.000 հայեր, որոնց 60.000-ը տեղաբաշխվել էր Ադանայում, 12.000-ը՝ Չորք-Մարզվանում, 8.000-ը՝ Հաճընում, 3-4.000-ը՝ Տարսոնում, 2-3.000՝ Մերսինում և այլուր: 50.000 հայեր հաստատվել էին Մարաշում, Այնթափում, Զեյթունում, ինչպես նաև Կիլիկիա էին ուղարկվել 10.000 հայ որբեր[7]: Հայ գաղթականության հույսերը սակայն չարդարացան. 2-3 տարի անց, երբ հայ գաղթականությունը հարկադրված եղավ նորից գաղթականության

---

[1] Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները Խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Ե., 2011, էջ 61: Տե՛ս նաև ՀՀ ԳԱԱ, ֆ. 200, գ. 176, թ. 2:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 64: Տե՛ս նաև ՀՀ ԳԱԱ, ֆ. 200, գ. 24, թ. 7 և http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_26.php?reg=2 , 31.01.2018:

[3] ՀՀ ԳԱԱ ֆ. 200, գ. 217, թ. 16:

[4] Տե՛ս Ալեքսանյան Հ., նշվ. Աշխ., էջ 77-79:

[5] Տե՛ս Հայ գաղթականության պատմություն, հտ. 2, Ե., 2003, էջ 337:

[6] Տե՛ս Աբրահամյան Ա Համառոտ ուրվագիծ հայ գաղթականության պատմության, Բ, Ե., 1967, էջ 20:

[7] Տե՛ս Թոփուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Ե., 1986, էջ 162:

ուղին բռնելու, ֆրանսիական իշխանությունները, ինչպես հայտնի է, գաղտնի պայմանագրով թուրքերին զիջեցին Կիլիկիան: Երբ Կիլիկիան թուրքական տիրապետության տակ անցավ, հայերը, բնական է, այնտեղ մնալ այլևս չէին կարող, իսկ մյուս կողմից՝ «դաշնակից» Անգլիան, հայ ժողովրդի ողբերգական այս ծանր շրջանում, փակած է եղել հայ գաղթականության մուտքը Եգիպտոս, Իրաք և Պաղեստին: Հայ ժողովուրդը, զրկված նյութական հնարավորություններից, ապաստանում է Սիրիայում և Լիբանանում: Այսպես, Մարաշի և նրա շրջակա գյուղերի հայերից 12.000-ը զոհվեց կռիվների ժամանակ կամ նահանջի ճանապարհին, 2.000-ը նահանջեց Ադանա ֆրանսիական զորքի հետ, մնացած 8.000-ը գաղթեց Սիրիա: 1921 թ. կեսերին Սիրիա հասան նաև Այնթափի 18.000 հայերից 14.000-ը, 1.058 զեյթունցիներից միայն 471-ը[1]: Արդյունքում, Ֆրանսիայի գաղութատիրական քաղաքականությունն աղետալի հետևանքներ ունեցավ Կիլիկիայի հայ բնակչության համար: Արևմտահայության այս բեկորները, որ նոր էին ապրել ցեղասպանություն, բազմաթիվ նոր զոհեր տալով, մեծամասնությամբ գաղթեցին Սիրիա:

Տարածաշրջանում ամենահայաշատ քաղաքը կրկին Հալեպը դարձավ: Հայաստանի խորհրդարանը 1919 թ. հունիսի 4-ի նիստին, քննարկելով գաղթականության ներգաղթի հարցը, Հալեպում հիշատակում է 80.000 հայ[2]: Արդեն 1921-1922 թթ. հաշվվում է 75.000 և 1923-1924 թթ.՝ 48.000 հայ[3]:

Հայաշատ էր Ալեքսանդրետի սանջակը, որտեղ հաստատվեցին մեծ մասամբ Կիլիկիայի հայերը՝ 17.800 մարդ: Վերականգնվեց նաև Լատակիայի հայ գաղթօջախը, որի նախկին բնակիչները զոհ էին գնացել եղեռնին: Այստեղ հաստատվեց 4.000 հայ[4]: Հյուսիս-արևելյան Սիրիայում ևս ձևավորվեցին հայկական գաղթօջախներ՝ ի հաշիվ Ուրֆայից, Տիգրանակերտից, Մարդինից և այլ վայրերից եկած հայության: 1918-1919 թթ. համալրվեց նաև Դամասկոսի հայկական գաղութը:

Թեև պատերազմի տարիներին Թուրքիայից եկած գաղթականությունը Լիբանանում քիչ է հաստատվել, որովհետև այնտեղ մոլեգնել է սովը, և հենց Լիբանանում այդ ժամանակ 300.000-ից ավելի մարդ է մահացել սովից[5], այնուամենայնիվ Կիլիկիայի աղետից հետո բազմահազար հայեր ապաստան գտան նաև այստեղ: 1923-1924 թթ. միայն Բեյրութում և նրա արվարձաններում կային 25.000 հայեր[6]: Նշենք, սակայն, այս տարածաշրջան հասած հայերի մի զգալի մասը միառժամանակ այստեղ մնալուց հետո արտագաղթում էր: Այսպես, Սիրիայում հանգրվանած 225.000 հայ գաղթականներից 1924 թ. մնացել էր միայն 150.000-ը[7]:

Թե որքան է եղել Սիրիա և Լիբանան եկող հայ գաղթականության ճիշտ թիվը, վիճակագրությունները տարբեր են, մանավանդ որ գաղթականությունը հոսուն վիճակում է գտնվել. նրա որոշ մասը տեղափոխվել է Հյուսիսային և Հարավային Ամերիկա, Ֆրանսիա, Բալկաններ և այլ վայրեր: Ըստ 1924 թ. «Սիրիահայ տարեցույց»-ում հրապարակված մի հաշվետվության, հետևյալ թվով գաղթականություն է եղել Սիրիայում և Լիբանանում. Հալեպում՝ 48.000 հոգի, Բեյրութում՝ 15.000, Հոմսում և Համայում՝ 12.000, այլ քաղաքներում՝ 20.000, որբանոցներում՝ 10.000[8]:

«Հայաստանի կոչնակ»-ի մեջ հրատարակված վիճակագրության համաձայն Սիրիայում և Լիբանանում 1925 թ. ապրելիս է եղել շուրջ 150.000 հայ բնակչություն, որից Հալեպում և շրջակայքում՝ 90.000, Բեյրութում՝ 18.000, Դամասկոսում՝ 8.000, Իսկանդերինում՝ 8.000, Լիբանանի մեջ ցրված՝ 6.000, Թրապլսում և Ձղարթայում՝ 5.000, Բեյլիյում

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 163-164:
[2] «Հայաստանի աշխատաւոր», 1919, № 76, էջ 2:
[3] Տե՛ս Թոփուզյան Հ., նշխ. աշխ., էջ 169-171:
[4] Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, հտ. 2, էջ 339:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 337:
[6] Տե՛ս նույն տեղում:
[7] Տե՛ս Թոփուզյան Հ., նշխ. աշխ., էջ 167:
[8] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 21:

ցրված՝ 6.000, Պատրոսում՝ 3.000, Զահլեում և շրջակա գյուղերում՝ 2.000, Սուրում և Սահդայում՝ 3.000, Ճյունիում՝ 2.500, Դաղերում՝ 2.500[1]:

Աղբյուրներից նկատելի է, որ վերոնշյալ վիճակագրության մեջ Սիրիայի և Լիբանանի հայ բնակչության թիվը պակասեցված է: Սիրիա և Լիբանան եկող հայ բնակչության թիվը, չհաշված այդ երկրներում պատերազմից առաջ ապրող հայերին, հաշվվում է շուրջ 125.000, որից 25.000 հոգի մահացել է սովից և համաճարակից, կամ փոխադրվել այլ գաղթավայրեր: Հայ բնակչությունը Սիրիայում և Լիբանանում տեղադրված է եղել հետևյալ կերպ. Հալեպի նահանգում՝ 55.000 հոգի, որից 25.000-ը՝ Հալեպ քաղաքում, Դամասկոսի նահանգում՝ 15.000, որից 13.000-ը՝ Դամասկոս քաղաքում, Ալեքսանդրետի սանջակում՝ 5.000, Ալլահուտի նահանգում՝ 10.000, Մեծ Լիբանանում՝ 40.000, որից 22.000-ը գտնվել է Բեյրութում [2]: Հայերի թվաքանակի վերաբերյալ առավել արժանահավատ տվյալներ է ներկայացնում Հ. Թոփուզյանը՝ համադրելով մի շարք աղբյուրներ. 1923-1924 թթ. Սիրիայի տարածքում հաշվվում էր 93. 905 հայ, իսկ Լիբանանում՝ 42.641[3]:

Աղետալի էր Միջագետքում գտնվող 25.000 հայ վասպուրականցիների վիճակը, որոնք 1918 թվականին՝ թուրքերի կողմից զինադադարի խախտումից հետո, զանգվածաբար դիմել էին դեպի Անդրկովկաս, սակայն թուրքերը փակել էին ճանապարհը: Հայերը թեքվել էին դեպի Պարսկաստան, սակայն թուրքերն ավելի վաղ մտնելով կտրել էին Անդրկովկաս տանող ճանապարհը: Վասպուրականցիներն ու նրանց միացած Խոյի, Սալմաստի, Ուրմիայի հայերը շարժվել են դեպի հարավային Պարսկաստան[4]:

XIX դ. 90-ական թթ. Արևմտյան Հայաստանում կազմակերպված զանգվածային ջարդերի ժամանակ, իրանական կառավարությունը անարգել թույլատրում էր հայ փախստականներին անցնելու իրանական սահմանը: Իրանական կառավարության հայանպաստ քաղաքականության խոսուն վկայությունը կարող է հանդիսանալ Իրանի հայ բնակչության արագ աճը: Եթե XIX դ. 50-60-ական թթ. Իրանում կար շուրջ 20 հազար հայ բնակիչ, ապա 1890 թ. այն արդեն կազմում էր 80.000[5]: XIX դարում հայերը սփռված էին ողջ Իրանի տարածքով մեկ: Երկրի մայրաքաղաք Թեհրանը աստիճանաբար դառնում էր հայության կենտրոնացման վայր, որտեղ ստեղծվեց կազմակերպված հայ համայնք: Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, Պարսից կառավարությունը իրեն հայտարարեց չեզոք և պաշտոնապես գործի չէր խառնվում: Սահմանի քրդերի արշավանքները բացատրվում էին իբրև ավազակային ըմբոստացումներ, որոնց դեմ կառավարությունը անզոր էր կռվելու: Թուրքերը արշավում էին Ուրմիա լճի հարավային կողմից. շուտով այս շրջանը վտանգի տակ ընկավ: Հայերը սկսեցին հետզհետե հեռանալ: Գաղթեցին Թավրիզից, ինչպես նաև Սալմաստից ու Խոյից 17.000 հայ և 4.000 ասորի[6]: Սկսեցին գաղթել նաև Համադանի, Սուլթանաբադի և Ղազվինի հայերը: Բոլոր գաղթականների թիվը լինում է 450 ընտանիք՝ մոտ 2.000 հոգի, որոնցից 60 ընտանիք անցնում է Կովկաս, 300 ընտանիք մնում է Ռաշտում, 40-ը՝ Էնզելիում և 50-ը՝ Մազանդարանում[7]:

1918 թ. օգոստոսին բազմահազար գաղթականներ Պասկաստանի վրայով հասան *Իրաք*: Բրիտանական իշխանությունները պատսպարեցին նրանց Բաղդադից 45 կմ. հյուսիս-արևելք՝ Պաքուբա գյուղաքաղաքի առջև տարածվող անապատում նախապես պատրաստված վրանների տակ, ուր մնացին մինչև 1920 թ.[8]: 1919 թ. ապրիլին Գաղթականության կոմիտեի կողմից կազմվել է վիճակագրություն, ըստ որի 1918 թ. մարտից

---

[1] Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1925, էջ 794:
[2] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 22: Տե՛ս նաև Հայ գաղթաշխարհի պատմություն, հտ. 2, էջ 339:
[3] Առավել մանրամասն տե՛ս Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 169:
[4] Տե՛ս Էլչիբեկյան Հ., Վասպուրականի հայերը Միջագետքում և նրանց վերադարձը Սովետական Հայաստան, «Տեղեկագիր» Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի, 1949, № 9, էջ 17-26:
[5] Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր. 2013, էջ 24:
[6] Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002, էջ 277:
[7] Տե՛ս նույն տեղում, էջ 280:
[8] Տե՛ս Օհանյան Ս., Իրաքի հայ համայնքը 20-րդ դարում, Ե., 2016, էջ 28-30:

մինչև 1919 թ. ապրիլ Իրաք են գաղթել 26.183 հայ գաղթական, որից միայն 14.453-ն է տեղ հասել (6.975-ը մահացել է, 3.755-ը՝ կորել)[1]: Պաքուբա են տեղափոխվում նաև ավելի քան 2.000 կարնեցիներ, որվքեր դեռևս 1915 թ. դեկտեմբերին հյուսիսային Իրաքով հասել էին Մուսուլ: Այստեղից գաղթականությունը տեղափոխվում է երկրորդ գաղթակայան՝ Նահր Օմար, որտեղ արված վիճակագրական տվյալները հետևյալ պատկերն են ներկայացնում. Միջագետք հասնող հայ գաղթականության ընդհանուր թիվը 18.219 է, որից 15.000-ը՝ Վանից, 719-ը՝ Սալմաստից, 2.500-ը՝ Ուրմիայից և Սուլտուզից: Ըստ սույն վիճակագրության՝ Վանից մինչև Պաքուբա ճանապարհին սպանվել, մահացել կամ կորել է 10.730 հայ, իսկ հենց Պաքուբայում մահացել է 2.677-ը: Այսպես, 1920 թ. հունվարի 1-ին գաղթականության թիվը Պաքուբայում 15.697 էր, իսկ արդեն Նահր Օմարում 1921 թ. հունվարի 1-ին՝ 12.384, հուլիսին՝ 11.936[2]: Այստեղ ներառված չէ Բաղդադում հաստատված 2.000-ից ավել գաղթականությունը, իսկ մեկ այլ տվյալի համաձայն Բաղդադ-Բակուրէ հատվածում կար 15.000 հայ, Մուսուլում՝ 12.000, Դեր Զորի անապատներում՝ 5.000[3]:

Արդեն 1920-ական թթ. Հայաստան ներգաղթելուց հետո պատկերը զգալիորեն փոխվում է. 1924-ին Իրաքում հայերի վիճակագրությունը հետևյալ պատկերն է ներկայացնում՝ 8.438 հայ, որից 1.121-ը տեղացիներ էին: 1925-ին Հայաստան գաղթեցին ևս 379 հայ[4]: Իրաքի հայ առաջնորդարանը, Խորհրդային Հայաստանի կառավարության Պարսկաստանի ներկայացուցչի պահանջով, նույն թվականին ևս կազմել է իրաքահայության վիճակագրությունը, ըստ որի այստեղ հաշվվել է 6.539 հայ[5]:

Եգիպտահայ գաղթավայրը ևս 20-րդ դարի առաջին քառորդում բավականաչափ մեծանում է՝ Թուրքիայից մի քանի անգամ Եգիպտոս եկող զանգվածային գաղթականությամբ: Կահիրեում տպագրվող բրիտանամետ «Ալ-Մուքաթթամ» օրաթերթը 1889-1896 թթ. հրապարակումներ է ներկայացնում արևմտահայերի կոտորածների և արևմտահայ գաղթականության առնչությամբ՝ փաստելով, որ մեծ թվով հայեր 1896 թ. կոտորածների օրերին ապաստանել են նաև Եգիպտոսում: Միայն Ալեքսանդրիայում 1.000 հայ է ապաստան գտել[6]: Մինչ 1890-ական թթ. հայերը Եգիպտոս էին տեղափոխվում հիմնականում մենակ կամ ընտանիքներով, իսկ կոտորածների ընթացքում արդեն գալիս էին խմբերով, և տեղափոխությունը բացառապես ստիպողական բնույթ էր կրում: Եգիպտոսի հայ կաթոլիկների 1885-1897 թթ. մարդահամարների տվյալների հիման վրա նկատելի է, որ, ի տարբերություն նախկինում Իզմիրից, Պոլսից, Սեբաստիայից և Հաճնից արտագաղթող հայերի, 1880-1890-ականներին Եգիպտոս ներգաղթածների ճնշող մասը եկել է կայսրության այն վայրերից (Պոլիս, Եվդոկիա, Մարզվան, Արաբկիր, Կեսարիա, Տրապիզոն, Ադանա, Բուրսա, Սասուն, Դիարբեքիր, Այնթապ, Մարաշ և այլն), որտեղ իրականացվել են հայերի զանգվածային կոտորածներ: 1896 թվակիր մի արխիվագրի տվյալներով՝ Կ. Պոլսից մեկնող «մեն մի շոգենավ հարյուրավոր գաղթականներ» էր տանում Եգիպտոս»[7]:

Եգիպտոսի հայ գաղթավայրը խոշոր թվով գաղթականություն ընդունել է 1909 թվականին՝ Ադանայի ջարդերից հետո: Այդ թվականին Կիլիկիայից և Թուրքիայից տարբեր շրջաններից Եգիպտոս է գաղթել շուրջ 2.000 հայ գաղթականություն: Մեծ թվով հայ բնակչություն է եկել Եգիպտոս Համաշխարհային առաջին պատերազմի արյունոտ տարիներին, երբ սկսվել են Թուրքիայում հայերի վայրենի ջարդերը: Հայ գաղթականության հոսանքը դեպի Եգիպտոս շարունակվել է նաև զինադադարի սկզբներում և

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 31-32:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 35-37, 53-69, Տե՛ս նաև ՀՀ ԳԱԱ ֆ. 200, գ. 499, թ. 149:
[3] «Հայաստանի աշխատաւոր», 1919, № 76, էջ 2:
[4] Տե՛ս Ալպոյաճյան Ա., Իրաքի հայերը, էջ 41:
[5] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 51:
[6] Տե՛ս Երանոսյան Ն., Եգիպտոսի «Ալ-Մուքաթթամ» օրաթերթի հրապարակումները հայերի կոտորածների և հայ գաղթականների մասին (1889-1896 թթ.), Սփյուռքագիտություն տարեգիրք, Ե., 2013, էջ 106:
[7] Տե՛ս նույն տեղում:

Զմյուռնիայում և Կիլիկիայի աղետներից հետո [1]: Միայն Սվետիայից միանգամից Եգիպտոս է գաղթել շուրջ 5.000 հայ: Եգիպտոս են տեղափոխվում նաև թուրքական բանակից դաշնակիցների վերցրած հայ ռազմագերիները: Եգիպտոս են տեղափոխվում նաև շուրջ 1.000 որբեր: Վրանաքաղաքի էր վերածվել Պորտ Սայիդը, որտեղ հաստատվել էին մուսալեռցիները (թվով 4.058) 1915 թ. օգոստոսի ինքնապաշտպանությունից հետո, իսկ 1918 թ. մայիս-հունիս ամիսներից՝ Հորդանանի, Միջագետքի, Սիրիայի տարածքներից այստեղ սկսեցին տեղափոխվել հազարավոր հայեր՝ ապաստանածների քանակը հասցնելով 9.000-ի[2]:

Թե որքան հայ գաղթականություն է Թուրքիայից Եգիպտոս ապաստանել Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին ու նրանից հետո և ինչքան է եղել եգիպտահայության ընդհանուր թիվը՝ դժվար է ասել վիճակագրական տվյալների բացակայության պատճառով: Ուսումնասիրողներից ոմանք այդ թիվը 25.000 են հաշվում, ոմանք՝ 30.000, նույնիսկ մինչև 50.000: Ճշմարտության մոտիկը, կարծես, 20.000-ն է, որից 10.000-ը՝ Կահիրեում, 7.000-ը՝ Աղեքսանդրիայում, իսկ մնացածը՝ այլ վայրերում[3]: Նոր ժամանակներում ավելի է ընդարձակվում հայերի բնակության քարտեզը Եգիպտոսում. 1925 թ.՝ 40.000 հայ[4]:

Հայկական կոտորածներից հետո հայերի հոսքը ուժեղացել է նաև դեպի Եթովպիա ու Հորդանան: Գաղթողները հիմնականում գյուղացիներ ու արհեստավորներ էին:

Բալկանյան թերակղզում առավել համալրվում են Բուլղարիայի, Հունաստանի հայ համայնքները, ձևավորվում են նորերը *Ալբանիայում*[5], *Հարավսլավիայում*[6]:

XX դարի սկզբին բուլղարահայ համայնքը, իշխանությունների թույտվությամբ, ձեռք բերեց ներքին ինքնավարություն՝ նոր հիմքերի վրա դնելով համայնքի և բուլղարական կառավարության փոխհարաբերությունները: 1895-1896 թվականներին Թուրքիայից Բուլղարիա եկած հայ գաղթականության ավելացման արդյունքում ստվարացած բուլղարահայ համայնքը 33-35.000-ի էր հասել[7]: 1896 թ. այս գաղթը փոխեց բուլղարահայերի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը, այն դեպքում, երբ, օրինակ, մինչ այդ բուլղարահայերի մեծ մասի առօրյա գործածական լեզուն թուրքերենն էր: 1896 թ. դեկտեմբերին Յ. Լեփսիուսի հանձնարարականով Բուլղարիա մեկնած՝ (այնտեղ գտնվող հայ փախստականների դրությանը ծանոթանալու և օգնության կազմակերպման համար առաջարկներ ներկայացնելու համար) ծագումով ղարաբաղցի հայ ավետարանական քահանա Աբրահամ Ամիրխանյանցը լինում է Ռասչուկ, Վառնա, Շումլա և այլ քաղաքներում, որտեղ համապատասխանաբար կային 2.000, 6.000 և 2.000 փախստականներ[8]: Հղում կատարելով «Դեյլի մեսինջերում» տպված մի հոդվածի՝ Եգիպտոսի «Ալ-Մուքաթթամ» օրաթերթը տեղեկացնում է, որ նախատեսվել է կազմել երեք անձից բաղկացած մի հանձնաժողով՝ Բուլղարիայում ապաստանած հայերի համար հավաքված ֆինանսական միջոցները (125.000 ֆրանկ արժողությամբ) բաժա-

---

[1] Տե՛ս Երեմյան Հ., Հայերը Եգիպտոսի մեջ, Ս. Պարթևյանի «Եգիպտահայ տարեցույց», 1916 թ., էջ 140:

[2] Տե՛ս Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե. 2005, էջ 91-94:

[3] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 70:

[4] Տե՛ս «Հայերն աշխարհում», հանրագիտական համառոտ բառարան, Ե., 1995, էջ 40:

[5] Առաջին հայ բնակիչները՝ Հայկ Բալջյանը և Լևոն Բոդիկյանը, Ալբանիա են եկել 1912 թվականին՝ Առաջին բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո, երբ Ալբանիան հռչակվել էր անկախ պետություն: Հայերի թիվը երկրում ավելացել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ Մեծ եղեռնից փրկված գաղթականների հաշվին: 1920-1930-ական թվականներին հայեր են գաղթել Ալբանիա նաև եվրոպական երկրներից՝ Հունաստանից, Գերմանիայից, Իտալիայից, Ֆրանսիայից և Անգլիայից: Հիմնականում բարձրագույն կրթությամբ մասնագետներ էին՝ բժիշկներ, ատամնաբույժներ, գործարարներ: Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, Ե., 2003, էջ 31:

[6] Մեծ եղեռնի տարիներին և հատկապես 1922 թվականին Իզմիրի ջարդերից հետո Հարավսլավիայում ապաստանել են պոլսեցի և կիլիկեցի հայեր, բնակություն հաստատել Մակեդոնիայում, Սերբիայի քաղաքներում, Տե՛ս Հայերն աշխարհում, էջ 66:

[7] Տե՛ս Ղասաբյան Զ., Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1896-1970), Ե., 1986, էջ 16:

[8] Տե՛ս «Հայաստան-Բուլղարիա. անցյալը, ներկան և ապագան» գիտաժողովի զեկույցների ժողովածու, Ե., 2009, էջ 149:

նելու նպատակով: Հոդվածում նշվում է, որ այդ գումարի տասնապատիկ ավելին է անհրաժեշտ՝ այնտեղ գտնվող 50.000 հայերին օգնելու համար (1896 թ.)[1]:

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին Թուրքիայից փախել և Բուլղարիա են ապաստանել շուրջ 2.000-3.000 հայեր: Բուլղարիան Թուրքիայի դաշնակիցն էր, այնուամենայնիվ, բուլղար ժողովուրդը մարդասիրաբար իր հարկի տակ ընդունեց և ապաստանեց հայ փախստականներին: Պատերազմը վերջանալուց և զինադադարը կնքելուց հետո Բուլղարիա գաղթած հայ գաղթականության որոշ մասը՝ մոտ 10.000 հոգի, վերադարձել են իրենց նախկին բնակավայրերը: Այդ գաղթականների վերադարձից հետո Բուլղարիայի հայ բնակչության թիվը իջել է մինչև 16.000-ի[2]:

Ամենից խոշոր հայ գաղթականությունը Թուրքիայից Բուլղարիա է եկել 1922 թվականին՝ հունական բանակի նահանջի և քեմալական իշխանությունների ձեռնարկած հայ բնակչության նոր տեղահանությունների ու կոտորածների հետևանքով: Թրակիայի ճանապարհով 1922 թվականին Թուրքիայից Բուլղարիա է եկել ավելի քան 22.000 հայ գաղթականություն: Այդ նույն տարին ծովային ճանապարհով եկել և Վառնայում ու Բուրգասում ցամաքեն իջել 2.000-3.000 հայ փախստական: 1922 թվականին Բուլղարիայի հայ բնակչության թիվը հասել էր 52.000-ի[3]: 1922 թ. հոկտեմբերի 30-ին Բուլղարիայի ներքին գործերի մինիստր Ռայկո Դասկալովը «Էկո դի Բուլգարի» թերթի խմբագրի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ նշել է, որ Բուլղարիայում ապաստանել են 20.000 հայ գաղթականներ, որոնց հարցերով զբաղվելու է Սոֆիայում ստեղծված «Գաղթականական հանձնաժողովը»[4]: 1923 թ. սկզբին Սև ծովի վրայով Վառնա են հասել հայ գաղթականների վերջին քարավանները և այդ նույն թվականին 47.000-ի հասնող բուլղարահայ համայնքում արդեն օրակարգի հարց էր դարձել ներքին կառավարման, հասարակական, մշակութային կյանքի կազմակերպման խնդիրները[5]:

Նշենք նաև, որ ըստ բուլղարական վիճակագրական գլխավոր վարչության տվյալների, Բուլղարիայում ապրող հայ բնակչության թիվը հետևյալն է եղել՝ 1920-ին՝ 11.509, 1926-ին՝ 27.322[6]:

Հունաստանը հայկական ամենահին ու ամենախիտ գաղթօջախներից էր, որտեղ պարբերաբար հայ գաղթականության հոսք է եղել: Զանգվածային գաղթ է սկսվել 19-րդ դարի վերջից, Բալկանյան պատերազմներից հետո, երբ Հունաստանին անցան Սալոնիկը, Տրաման, Գավալան, Քսանտի ու այլ հայաշատ քաղաքներ և շարունակվել Մեծ եղեռնի և հատկապես 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի ժամանակ: Հայ գաղթականների թիվը 80.000 էր, որից 10.000-ը՝ որբեր[7]: Հայերի, հատկապես գաղթականության, վիճակը շատ երերուն էր Հունաստանում: 1922 թ. հայ գաղթականության մեծ հոսք տեղի ունեցավ Զմյուռնիայից և Թրակիայից, երբ հունական բանակը թուրքական ճնշման տակ հարկադրաբար նահանջում էր այդ շրջաններից: Հայ ու հույն բնակչությունը, խուսափելով թուրքական վայրագությունից, տարերայնորեն հետևեց նահանջող զորքին՝ հաստատվելով Աթենքում ու շրջակայքում (զմյուռնիացիները) և Հունաստանի հյուսիսային շրջաններում (թրակիացիները): Հին և նոր հայ գաղթականությունը միասին Հունաստանում կազմում էին ավելի քան 45.000 մարդ[8]: Արդյունքում Հունաստանը դարձել էր հայ գաղթականության կուտակման կենտրոններից մեկը: Հունական պաշտոնական տվյալների համաձայն 1924 թ. այստեղ հաստատված հայերի թիվը հասնում էր 55.000-ի[9], այլ տվյալներով՝ մինչև 100-120 հազարի: Գաղ-

---

[1] Տե՛ս Երանոսյան Ն., նշվ. աշխ., էջ 106:
[2] ՀՀ ԳԱԱ ֆ. 200, գ. 432, թ. 4:
[3] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 121:
[4] Տե՛ս Դասաբյան Զ., նշվ. աշխ., էջ 32:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 34:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 35:
[7] Հայերն աշխարհում, էջ 70:
[8] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ, էջ 32:
[9] «Հայաստանի կոչնակ», 1925, № 2, էջ 54:

թականների զգալի մասը ապրում էր զրկված անհրաժեշտ տարրական պայմաններից[1]:

1896 թ. Համիդյան ջարդերի ժամանակ Պոլսից, Այնթափից և այլ վայրերից Կիպրոս են գաղթում 5.600 հայեր, որոնց մի մասը, չգտնելով ապրուստի միջոցներ, հեռանում է կղզուց: Այնուհետև այստեղ է հանգրվանում 1921 թ. Կիլիկիայից հեռացած հայության մի մասը՝ Կիպրոսում հայության թիվը հասցնելով 5.700-ի, որի մի մասը կրկին հեռանում է կղզուց, և արդեն 1927 թ. հայերի թիվը այստեղ դառնում է 3.640 անձ[2]:

Արևելյան Եվրոպայի երկրների[3] հայ գաղթավայրերի բնակչությունը ևս զգալի չափով ավելացավ 1895-1896 թթ.՝ ջարդերի, 1909 թ.՝ Ադանայի կոտորածների, Մեծ եղեռնի հետևանքով:

Ռումինիայում կառավարությունը թեև առանձին սեր չտածեց դեպի հայերը, այնուամենայնիվ հազարավոր հայեր այստեղ հասան և հաստատվեցին հայաբնակ քաղաքներում: Ինչպես Բուլղարիայում, այստեղ ևս արևմտահայ գաղթականները կյանք տվեցին մեռած համայնքներին: 1885 թվականին «Արմենիա» թերթը 4.000 հոգի էր նշում այստեղ, սակայն Պալասանյանը հիշատակում է 16.000 թիվը: 1899 թ. վիճակագրության համաձայն 6.598 հայ և 500-700 կաթոլիկ կար Ռումինիայում: Միջին հաշվով ընդունվում է 10.000 հայ, որոնց ավելացավ 4.000 նոր գաղթական[4]:

Ռումինիայի հայ գաղթավայրի բնակչության վիճակագրությունը ներկայացված է Գ. Գալամքերյանի 1913 թ. փետրվարի 15-ին կազմած տեղեկագրության մեջ, ըստ որի ընդհանուր առմամբ՝ 3.292 տուն է բնակվել Ռումինիայում[5]: Իսկ արդեն Ռումինական կառավարության 1919 թ. վիճակագրության համաձայն այստեղ կա 68.000 հայ գաղթական, որից 18.000-ը՝ Բեսարաբիայում, 5.000-ը՝ Բեկովինայում, 17.000-ը՝ Տրանսիլվանիայում, 18.000-ը՝ Մոլդավիայում, Դոբրուջում և այլուր Էնզելիում[6]:

Թուրքիայում տեղի ունեցող կոտորածներից հետո տարբեր ժամանակներում *Հունգարիա* են եկել փոքր թվով հայ գաղթականներ, տեղավորվել հիմնականում Հայաքաղաքում՝ նոր շունչ հաղորդելով խամրող գաղթօջախին: 1922 թ. 25.000 հայ էր ապրում Հունգարիայում[7]: Փոքր թվով հայեր հաստատվեցին նաև Լիտվիայում, հատկապես՝ Ռիգա քաղաքում. 1913 թ. այստեղ կար 121 հայ, որոնք եկել էին Թուրքիայից, Իրանից, Ռուսաստանից[8]:

Արևմտյան Եվրոպայի հայկական համայնքներից ամենից մեծն ու կազմակերպվածը միշտ էլ եղել է *ֆրանսահայ համայնքը* (մինչև 1918 թ. այստեղ հայության թիվը հասնում էր 2.000-ի[9]), որը ստվարանում է 20-րդ դարի սկզբին Թուրքիայում հայերի դեմ համիդյան բռնությունների հետևանքով, Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին, և այնուհետև անընդմեջ եկող հայ գաղթականության շնորհիվ: Կարճ ժամանակում Ֆրանսիայում հայերի թիվը հասնում է 50.000-ի,[10] իսկ հայ որբերի թիվը այստեղ հասել էր մոտ 5.000-ի[11], ինչպես նաև Ամերիկյան նպաստամատույցը[12] Ֆրանսիա է փոխադրել Սիրիայում և Հունաստանում որբանոցներից արձակված չափահաս հայ որբե-

---

[1] Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե., 2005, էջ 134:

[2] Տե՛ս Հայ գաղթականության պատմություն, հտ. 2, էջ 371:

[3] Հայոց ցեղասպանությունից հետո համալրվեցին Բուլղարիայի, Լեհաստանի, Հունգարիայի և Ռումինիայի հայկական գաղթօջախները, իսկ Չեխիայում և Սլովակիայում հայերը հաստատվել են հետխորհրդային ժամանակաշրջանում:

[4] Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 163:

[5] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 137:

[6] ՀՀ ԳԱԱ, ֆ. 200, գ. 131, թ. 151:

[7] Տե՛ս Հայերն աշխարհում. էջ 71, Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 157, Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Ե., 2011, էջ 154:

[8] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 274:

[9] «Ժամանակ», Պոլիս, 1960, հունվարի 9, № 16808:

[10] Տե՛ս նույն տեղում::

[11] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 157:

[12] Ամերիկյան նպաստամատույց վարչություն (անգլ.՝ American Relief Administration; ARA), կազմակերպություն, որ հիմնել է ԱՄՆ-ի կոնգրեսը 1919 թվականի փետրվարին, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Եվրոպայի և Մերձավոր Արևելքի տուժած բնակչությանը օգնություն ցույց տալու նպատակով:

ին[1]: Իզմիրի նոր աղետից և հայոց նոր գաղթից հետո Ֆրանսիայի հայ գաղութի թիվը շատ փոխվեց: Մարսելը, որ նախքան պատերազմը ուներ 400 հայ, 1927-ին արդեն ուներ մինչև 20.000 հայ, իսկ Լիոն քաղաքը՝ 4.000 հայ[2]: Հայ գաղթականության հոսքը դեպի Ֆրանսիա շարունակվում է հետագա տարիներին ևս: 1936 թվականին հայ գաղթականության նախկին թիվը հասնում է մինչև 70.000-ի[3]:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին են հիմնականում ձևավորվել Արևմտյան Եվրոպայի մյուս հայկական համայնքները: Կազմավորվեցին Անգլիայի, Բելգիայի, Ավստրիայի, Շվեյցարիայի, Գերմանիայի համայնքները, երբ թուրքական ջարդերից փրկված հազարավոր հայեր բնակություն են հաստատել այս երկրներում:

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին և նրանից հետո ոչ մեծ թվով գաղթական հայեր եկել և հասել են հեռավոր *Բրիտանական կղզիները*: 1922-ին Լոնդոնում բացվել է Ս. Սարգիս հայկական եկեղեցին: Հետագա տասնամյակներին շարունակվել է հայության անկանոն հոսքը Մեծ Բրիտանիա և ոչ միայն Մերձավոր Արևելքից, այլև Հնդկաստանից, Եթովպիայից, Հայաստանից: Ըստ 1925 թվականի վիճակագրական տվյալների, Անգլիայի երբեմնի մի քանի հարյուր հոգուց բաղկացած գաղթօջախների բնակչությունը հասել է 3.000-ի: Եկող գաղթականները բնակություն են հաստատել գլխավորապես Լոնդոնում, Մանչեստրում և փոքր թվով՝ Լիվերպուլում[4]:

19-րդ դար կեսերից զգալի էր հայ ներգաղթողների թիվը *Գերմանիայում*, ովքեր հիմնականում Արևելյան Հայաստանից եկած ուսանողներ էին: Երիտասարդների մեծամասնությունը ուսանում էր Արևելյան Գերմանիայում, նաև Բոննում և Հայդելբերգում: Երևանի պետական համալսարանի հիմնադիրներից են 19-րդ դարի վերջում Գերմանիայում ուսանած ուսանողները: Հայերի մյուս խումբը գերմանացի միսիոներների կողմից Գերմանիա բերված որբ երեխաներն էին, որոնց ծնողները սպանվել էին սուլթան Համիդի կողմից 1895-1896 թթ. իրականացված կոտորածների ժամանակ:

1915 թվականի Հայոց ցեղասպանությունից հետո հայերի մեծ ներգաղթի հոսք Գերմանիա չեղավ, ինչը տեղի ունեցավ Ֆրանսիայում: Սակայն Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներից հետո ցարական և կարմիր բանակներում ծառայող հայ ռազմագերիները պատերազմից հետո մնացին Գերմանիայում: Նրանք բնակություն հաստատեցին Շտուտգարտում և նրա շրջակայքում, բայց հետագայում նրանցից շատերը արտագաղթեցին ԱՄՆ: Արտագաղթը Գերմանիա շատ ավելին կարող էր լինել, եթե, իհարկե, Գերմանիան այդ ժամանակ հանդես չգար Թուրքիայի կողմից: Չնայած դրան, 1914 թվականին Բեռլինում հիմնվեց «Գերմանահայկական ընկերությունը», ինչն էլ հիմք ծառայեց, որ 1923 թվականին կազմավորվի առաջին հայկական համայնքը՝ «Բեռլինի հայկական գաղութը»[5]: 1920 թ. դրությամբ Գերմանիայում հաստատված հայերի թիվը չէր անցնում 200-ը[6]:

Համաշխարհային պատերազմից հետո *Շվեյցարիայի* «Հայրենասիրաց ընկերությունը» Պոլսում բաց է արել հայկական որբանոց 1920 թվականին փոխադրել է Շվեյցարիա և տեղավորել Ժնևի ու Լոզանի միջև եղած Բընեյ կոչվող մի գյուղում: Որբերի թիվը եղել է 40 հոգի: Որբանոցին կից բաց է արել նաև նախակրթարան: 1924 թվականի Սիրիայի և Լիբանանի որբանոցներից, ինչպես և Պոլսից, Էդրինեից, Բուխարեստից այս որբանոցն են բերվել նոր հայ երեխաներ և Բընեյի հայ որբերի թիվը հասել է 100-ի[7]:

---

[1] Տե՛ս Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 141:
[2] Տե՛ս Աճառյան Ա., էջ 726:
[3] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 167:
[4] Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 186:
[5] Տե՛ս Մակիչյան Վ., Գերմանիայի հայկական համայնքի կազմավորումը և զարգացումը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2016, էջ 305:
[6] ՀՀ ԳԱԱ ֆ. 200, գ. 420, թ. 4:
[7] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 199:

Ավելի քան 1.000 հայեր հաստատվել են նաև *Բելգիայում*[1], սակայն երբ գերմանացիները գրավեցին Բելգիան, նրանց մի մասը տեղափոխվեց Անգլիա, իսկ մյուս մասը՝ Հոլանդիա:

1922 թվականին Բելգիայում մնացած հայերի նախաձեռնությամբ կազմակերպվել է Բելգիայի հայ գաղութային վարչությունը, որի նպատակն էր ստեղծել վերկուսակցական համագաղութային կառույց: Այդ ժամանակվանից համայնքը ղեկավարվում է Բելգիայի կառավարության կողմից վավերացված ներքին կառավարման կանոնադրությամբ: Այդ տարիներին Բելգիայում գործել է Հայ-բելգիական ընկերությունը, որը բողոքի ցույցեր է կազմակերպել ընդդեմ թուրքական վայրագությունների: 1927 թվականին ողջ Բելգիայում եղել է 8.000-9.000 հայ բնակչություն[2]:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո *Ավստրիայում* ևս ապաստան են գտել մի քանի տասնյակ հայ ընտանիքներ Թուրքիայից և Արևմտյան Հայաստանից: 20-րդ դարի սկիզբին այստեղ հաշվվում էր 125 մարդ[3]: Փոքրաթիվ հայկական համայնք ձևավորվեց նաև Իսպանիայի Մադրիդ քաղաքում[4]: Որոշ հայ գաղթականներն էլ ապաստան են գտել Նիդեռլանդներում, սակայն մեծ մասը հետագայում տեղափոխվեց այլ երկրներ: Առաջին աշխարհամարտից հետո այստեղ հիմնվել է Հայ փախստականների օգնության հոլանդական հանձնախումբը[5]:

19-րդ դարի 90-ական թվականներից Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ գործադրված բռնությունների ու համիդյան կոտորածների (1894-1896 թթ.) հետևանքով նախկինում դեպի *ԱՄՆ* հայերի իրականացրած անհատական արտահոսքը վեր է ածվել զանգվածային գաղթի. եթե 1894 թ. ԱՄՆ-ում կար շուրջ 3.000 հայ, ապա արդեն 1900 թ. նրանց թիվը հասել է 15.000-20.000-ի[6]: Ընդհանուր առմամբ, 1899-1914 թթ. ԱՄՆ գաղթած հայերի թիվը կազմել է 51.950 մարդ[7]:

ԱՄՆ-ում նկատելի էր նաև արևելահայերի հոսք, որը, սակայն, ի տարբերություն արևմտահայերի, մեծ չափերի չի հասել: Այսպես, 1900-1905 թթ. ԱՄՆ էր մեկնել 50, 1905-1910 թթ. մոտ 300, 1910-1913 թթ. 1.200 հայ: Այս հոսքը նվազել է պատերազմի տարիներին, և արդեն 1920-1924 թթ. ԱՄՆ գաղթած 20.659 հայերից 168-ն է եկել Ռուսաստանից: Ընդհանուր առմամբ, ԱՄՆ գաղթականության գրասենյակի տվյալներով 1899-1924 թթ. ռուսական կայսրությունից Ամերիկա 3.500 հայ է մեկնել[8]: Նույն հանձնախմբի տվյալներով 1895 թվականից մինչև Առաջին համաշխարհային պատերազմը ԱՄՆ մեկնել է 60.000 հայ[9]:

1911-1912 թթ. իտալաթուրքական և 1912-1913 թթ. բալկանյան պատերազմների և հատկապես դրանց հաջորդող Առաջին աշխարհամարտի տարիներին գաղթականության նկատմամբ Օսմանյան կայսրությունում վերականգնված արգելքի հետևանքով քիչ թվով հայերի է հաջողվել արտագաղթել ԱՄՆ, արդյունքում, մեծացել է փախստական ճանապարհով կամ ամերիկյան հպատակություն ունեցող ազգականների օգնությամբ մեկնողների թիվը: Ընդհանուր առմամբ, եթե միայն 1914 թ. ԱՄՆ էր գաղթել 7.785 հայ, ապա հետագա տարիներին նրանց թիվը կտրուկ կերպով նվազել է՝ 1915-1919 թթ.՝ կազմելով ընդամենը 3.620 մարդ, որոնք հիմնականում Հայոց ցեղասպանությունից վերապրածներն էին: Արդեն պատերազմի ավարտին ԱՄՆ-ում կար շուրջ 78.000 հայ[10]: Առկա են վիճակագրական այլ տվյալներ. Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտոնական ներկայացուցիչ Խորեն արքեպ. Մուրադբեգյանը, ով 1919 թ. եղել է Ամերիկայում և

---

[1] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 114:
[2] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 214:
[3] Տե՛ս Հայերն աշխարհում, էջ 27: Տե՛ս նաև Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 92:
[4] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 212:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 415:
[6] Տե՛ս Ավագյան Ք., Հայերի արտահոսքը ԱՄՆ և կապը բնօրրանի հետ, Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ., միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2011, էջ 19:
[7] Տե՛ս Նույն տեղում, էջ 20:
[8] Տե՛ս Ավագյան Ք., Ամերիկայի միացյալ նահանգների հայ գաղութի պատմությունը, Եր. 2000, էջ 29:
[9] Տե՛ս նույն տեղում, էջ 32:
[10] Տե՛ս Ավագյան Ք., Հայերի արտահոսքը ԱՄՆ…., էջ 21:

հանգամանորեն ուսումնասիրել Ամերիկայի գաղթավայրերը, էջմիածնին ներկայացրած իր պաշտոնական զեկուցագրում հայտնել է, որ Ամերիկայում գտնվում է 120.000-ի հասնող հայ բնակչություն, իսկ 1921 թվականին Սովետական Հայաստանի կառավարությանը Գ. Ծովյանի ներկայացրած զեկուցագրում ամերիկահայ բնակչության թիվը հաշվում է 130.000 հոգի[1]: Այս տվյալները ցույց են տալիս, որ պատերազմի ավարտից և Մուդրոսի զինադադարից հետո Օսմանյան կայսրությունում սկսված քեմալական շարժման վերելքը (1919-1921 թթ.), ինչպես նաև Հայաստանի Առաջին Հանրապետության անկումը նոր թափ են հաղորդել դեպի ԱՄՆ իրականացվող հայ գաղթականությանը: Այսպես, մինչև 1924 թ. ԱՄՆ-ում հաստատվել է 141.229 հայ, որից 9.000-ը հեռացել են, իսկ ավելի քան 7.000-ը՝ մահացել, արդյունքում ստացվում է, որ 1924 թ. ԱՄՆ-ում կար 125.229 հայ[2]: Ավելի ուշ, Ամերիկյան գաղթականական հանձնախմբի վիճակագրական տվյալների համաձայն, 1925-1933 թթ. ԱՄՆ էր մուտք գործել 7.286, ընդ որում, նրանց գերակշիռ մասը՝ 6.167-ը, գաղթականի կարգավիճակով: Համաձայն Ամերիկյան մարդահամարի տվյալների արդեն 1930 թ. հայերը հիմնականում կենտրոնացած էին Մասսաչուսեթսի, Կալիֆոռնիայի, Ռոդ Այլենդի, Կոնեկտիկուտի նահանգներում: Արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին ԱՄՆ-ում բնակվում էր 200.000 հայ[3]:

XIX դարի 80-ական թթ. ձևավորվող կանադահայ համայնքը ևս համալրվում է: Մինչև Մեծ եղեռնը Կանադայում հայերի թիվը 1.800 էր, իսկ, ըստ կանադական ներգաղթի վիճակագրական տվյալների, 1900-1930 թթ. մուտք են գործել ևս 3.100 հայ[4]:

XX դարի սկզբին՝ Ադանայում կազմակերպած ջարդերից հետո են սկսել ձևավորվել Բրազիլիայի (1895 թ. այստեղ մոտ 100 հայ էր ապրում[5]), Արգենտինայի (1914 թ. Արգենտինային արդեն 2.000 հայ էր հաստատվել[6]) և Մեքսիկայի (հիմնականում խարբերդցի գաղթականներ[7]) հայկական համայնքները, որոնք առավել համալրվում են 1920-30-ական թթ. Կիլիկիայից և Իզմիրից գաղթած հայերով:

1918-ին՝ Մեծ եղեռնից հետո փոքրաթիվ հայ գաղթականներ, գլխավորապես բարեգործական կազմակերպությունների միջոցով ապաստանել են նաև Ավստրալիայում, ուր հայեր հաստատվել էին դեռևս XIX դարի կեսին[8]:

Արդյունքում, ըստ Ն. Ադոնցի Թուրքիայի տարածքում ապրող 1.800.000 հայությունից (ըստ հայոց պատրիարքարանի) ողջ մնաց մոտ 650.000-ը (Ռուսահայաստանում ապաստանեց 250.000 հայ, որից գրեթե 50.000-ը զոհ գնաց սովի համաճարակի, Կ. Պոլսի հայությունը՝ թվով 150.000, ևս փրկվեց, իսկ Միջագետք վտարվածներից հրաշքով կենդանի մնացին մոտ 300.000-ը)[9]: Այս թիվը, իրականում ավելի է ընդլայնվում, և մոտ մեկ միլիոն հայեր, ցրված աշխարհիս չորս կողմը, դուրս եկան հայրենիքից իրենց կյանքը ազատելու համար հալածանքներից, հարստահարություններից, մահվան սպառնալիքից կամ բռնի ուժով արտաքսվեցին բռնակալներից: Այս մեկ միլիոնի հասնող հայությունը աներևակայելի չարչարանքներից հետո ապաստան գտավ այստեղ ու այնտեղ, իր տոկունության և աշխատանքի շնորհիվ տուն ու տեղ գտավ, նյութական բարեկեցություն ապահովեց: Իսկ Հայաստանի առաջին հանրապետության նախկին ղեկավարությունը հաստատվելով Սփյուռքում[10]՝ ակտիվորեն շարունակեց իր գործունեությունը հայությանը համախմբելու տեսլականով: Այս կապակցությամբ Ս. Վրացյանը

---

[1] Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 354-355:
[2] Տե՛ս Ավագյան Ք., Ամերիկայի միացյալ նահանգների հայ գաղութի պատմություն, էջ 41:
[3] Տե՛ս Ավագյան Ք., Հայերի արտահոսքը ԱՄՆ…., էջ 25:
[4] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 331-332:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 118:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 100:
[7] «Հայրենիք», Բոստոն, 1946, էջ 230-232: Տե՛ս նաև Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 403:
[8] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 86:
[9] Տե՛ս Ադոնց Ն., Հայկական հարց, Ե. 1996, էջ 171:
[10] Տե՛ս Եղիազարյան Ա., Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարության հաստատումը Սփյուռքում. «Հոգևոր Հայաստանի»-ի ստեղծումը (հայեցակարգային որոշ դիտարկումներ), «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ» միջ. գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2011, էջ 41-52:

գրում էր Ամենայն Հայոց կաթողիկոսին. «Կազմակերպելով և բարեշինելով հանդերձ իր ներքին կյանքը, Հայ Սփյուռքը չմոռացավ ու չկտրվեց Մայր Հայրենիքից, իրեն միշտ զգաց Հայրենիքի մեկ մասը՝ մի տեսակ «Հոգևոր Հայաստան»»[1]:

Հայրենազրկված հայության խմբերը, հաստատվելով այս կամ այն երկրի տարածքում, առաջին փուլում շարունակում էին հույս փայփայել վերադառնալու հայրենիք: Այդ հույսը նրանց մեջ պահպանվեց մինչև անգամ 1940-ական թթ.: 1915-1918 թթ. նոր գաղթավայրերում հայության խմբերը չէին շտապում վրանաբնակ կենցաղից անցնելու մշտական բնակությանը: Երբ որոշակի դարձավ, որ հայության վերադարձը հայրենիք դառնում է անհնարին, տարագիր հայությունը կանգնեց երկընտրանքի առջև՝ կամ մնալ տարագրության օբյեկտ երկրամասերում՝ Սիրիա, Լիբանան, Իրաք, Պաղեստին կամ հեռանալ այլ երկրներ: Արդյունքում գաղթաշխարհը սկսեց կերպափոխվել՝ գաղթավայրային իրականությունից անցում կատարելով դեպի նոր մակարդակ՝ «սփյուռքյան ձևաչափ»: Համայնքներում սկսվեց ներքին միգրացիա, որոշ համայնքների ընդլայնում մյուսների հաշվին և այս տևաբար շարունակվող, այսօր իսկ գործող գործընթացից հետո գաղթավայրերում սկիզբ առավ, այսպես կոչված, սփյուռքայնացման գործընթացը, որը կարելի է բնորոշել որպես հայրենիք վերադառնալու անհնարինությունից դրդված բնակության պետությունում իրենց այլևս մշտական ու կայուն բնակիչ համարելու հայության խմբերի ընկալումը: Այս ընկալումը ծնեց ինքնակառավարման ու ինքնակազմակերպման նոր անհրաժեշտություն:

Нарине Нушерванян, Распределение армянских беженцев после геноцида армян. В статье представлена общая картина армянского беженства и распределение армян после геноцида, а также дается четкое представление об основах формирования диаспоры в результате геноцида. Это основано на том факте, что количественные и объемные (географические) изменения в диаспоре после геноцида, а также появление новых явлений самоидентификации в период миграции, в условиях невозможности вернуться на родину, то есть восприятие себя как общности, лишенной родины, т.е. диаспору, привели к качественно новому явлению, формированию современной армянской диаспоры.

Ключевые слова: Беженство, иммиграция, диаспора, зарубежный армянин, западный армянин, геноцид армян, Гамидская резня, мировая война, общины, самоорганизация общины, процесс становления диаспоры.

Narine Nushervanyan, The distribution of the Armenian deportees after the Armenian genocide. The article presents the general view of Armenian deportees and the distribution of the Armenians after the Genocide. It gives us an opportunity to observe formation basis of the Diaspora as a result of the Genocide. This is based on the fact that the quantitative and volume (geographic) changes in the Diaspora after the Genocide, as well as the emergence of new realities of self-identification among the deportees in the condition of impossibility to return to the homeland, i.e. perception of themselves as a whole unit deprived of homeland, led to a qualitatively new phenomenon - the formation of the modern Armenian Diaspora.

Key words: deportees, deportation, Diaspora, Diaspora Armenian, Western Armenian, the Armenian Genocide, Hamidian massacres, World War, communities, self-organization of communities, diasporisation.

[1] Բալյան Ա., Ս. Վրացյանի նամակը Գևորգ Զ ամենայն հայոց կաթողիկոսին, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Ե., 2009, էջ 205: